

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

„Կավկազի Ենթուկ“¹, օգոստ 1901 թ. Կանաչանածնի ճանապարհորդութեան շարունակութիւնը. „Մարտաշը կոտորածների ժամանակ չաղասուեց տիսուր վիճակից: 1895 թ. նոյեմբերի 18-ին ալր քաղաքում կոտորուցան 822 հայ (որոնցից 575 լուսառչական), ալրուցին 160 և կողովտուցան 1500 տներ: Մարտաշի զաղանութիւնների մանրամասնութիւնները լայտնի են ֆրանշիական զօրքի գնդապետ դըփելարի լայտազրից, որ զետեղուածէ „Դեղին զօրքի“ մէջ: Համելով Մարտաշի մինչև հոգու խորքը վըրդովուած տեղի ունեցած զաղանութիւններից, թիւրք վարչութեան անրարեխուութիւնից և լրբութիւնից, պիելար ժողովեց մութեսարիթին (Մըջանի կառավարչին) և պաշտօնեաներին — սպանութիւնների գլխաւոր զեկավարներին—նոյնպէս և թիւրք օֆիցիեներին և հրազդակով դատապարտում էր վարչութեան զործողութիւնները. իսկ օֆիցիեներին պիելար զիմեց խիստ խօսքերով, լանդիմանեց նրանց որ իրանց զէնքը ալրքան զզուելի կերպով են զործ ածել: Զէնքը տուածէ ձեզ, սուում էր ֆրանշիացին, հայրենիքը պաշտպանելու համար, նա ձեզ համար պիտի լինի պատուի նշանաբան, ձեր հայրերը ալդ զէնքով մեզ հետ կողք կողքի տուած կուում էին Դրիմում, իսկ դուք զործ ածեցիք նրան կանանց և երեխաներին կոտորելու համարութեանը, ինչպէս պատմում են

ականատեսները, ցնցող էր. Խոնարհեցրած իրանց զլուկները, օֆիցիեները, զինուորներն ու պաշտօնեաները լսում էին պիելարի խիստ լանդիմանութիւնները. Ալդ պատկերը մեր լիշողութեան մէջ զարթեցրեց մի ուրիշը, երբ խաչակրաց արշաւանքների ժամանակ, ֆրանշիական ասպետները այս իսկ տեղերում հաշիւ էին պահանջում սարակինուներից՝ քրիստոնեաների հալածանքների պատճառով: Անժամանակ չը կար եւրոպական պետութիւնների կօնցերու, կար քըրիստոնէութիւն, որի անունով նւրոպան զնում էր մահմեդական գաղանութիւնների դէմ:

«Մարտաշից մէկ ու կէս իջևան հեռու, համարեա անմատչելի լիռների լարիբինթոսում, գոնուում է Զէլթունը, որ լավտեան փառաւոր կը մնայ հայ տարեզրութիւնների մէջ. հոգի ալդ կոտրի պատմութիւնը — անընդհատ հերոսական կոփ է խոլարի դէմ:»

«1895 թուի հոկտեմբերի 24-ին Զէլթունի շրջանի ապստամբուած հալերը բարձրացրին աղասութեան դրօշակը Հոկտեմբերի 29-ին հալերը զրաւեցին թրաքական զօրանոցը Զէլթունում, ուր 700 հոգուց բաղկացած մի զօրաբաժին կար: Զէլթունի շուրջը, մատիկ և հեռաւոր շրջականերում, բոլրոքուեց պատերազմը:»

«Մահմեդական ազգաբնակութեան օգնութեան հասան կանոնաւոր զօրքերը և սկեցին կողոպտել ու կո-

տորել հայերին առանց դասանութեան խարութեան: Կանոնաւոր զօրքերը, Մաղար-բէի հրամանասուրութեամբ, սպաննեցին, ի միջի այլոց, հայո Սալվատօրին, պահանջելով նրանից՝ մահմեղականութիւն ընդունել, Ֆուրնուզում թիւրքերը, օգոստ քաղելով տղամարդկանց բացակալութիւնից, որոնք գնացել էին պատերազմի, բռնեցին հարիւրաւոր կանանց, ոմնանց բռնաբարելով և ոմանց սպաննելով: Զէլթունի կանագի լուր առնելով այդ սոսկալի գէպքի մասին, յարձակուեցան գերի զինուորների վրայ և դանակներով 400 մահմեղական մորթեցին:

Զէլթունի պաշարումը տեսց դեկտեմբերի 14-ից մինչև յունուարի 5-ը, նա զադարեց միայն այն ժամանակ, երբ միջամտեցին եւրապական պետութիւնները: Զը պէտք է մոռանալ, որ Զէլթունի պաշտպանները ընդամենը 6000 հոգի էին, մինչեւ պաշարողների թիւը հասնում էր 60,000-ի, այդ թուում և 25,000 կանոնաւոր զօրք— Զէլթունի անունը մինչև այժմ էլ ան է ազդում մահմեղականներին: Մեր քարեկամերից մէկը, որ հանապահողել էր Մարաշից Հալէպ, հանդիպել է ճանապարհին նորակու արար զինուորների, որոնք հարցնում էին ճանապարհորդներին՝ արդեօք գեռ չէ շարունակում կափւը Զէլթունի մօտ. Նրանք ասում էին որ եթէ կափւը շարունակուելիս լինի, իրանք պիտի փախչեն“:

Այնուհետև հեղինակը քննում է այն հարցը, թէ ո՞վքեր էին կոսորածների պատճառը Հալէրը թիւրքերին են մեղադրում, թիւրքերը՝ հայերին: Թալց ալսպիտի վէճերի տեղիք չը կայ: Այն ազառական շարժումը, որ սկսուեց Բալկաննեան թերակղզում, չէր կարող սահմանափակուած մնալ այդ տեղում, չանցնել Ասիական Թիւրքիա: Անկառակած է, որ ժամանակակից գաղա-

փարների ոգին տարածուեց և հայ ազգի մէջ ու ներշնչեց նրան միտր, պահանջել հասասար իրաւունքներ և սօցիալական ամելի լաւ պարմաններ՝ գոլութիւն պահպանելու համար: Եաւ ենթադրութիւններ կային, շատ ծրագիրներ և լուսեր էին ողբարում հայերին: Ազուեղ կարելի է լիշտառակել այն ֆանտաստիկական ծրագիրը, որին նայած՝ Հայաստանի գլխաւոր օգնականները պիտի լինէին անզլիացիները, որոնք, նրան պայում գտնուող հայկական կօմիտէտնիրի աշխացութեամբ լեղափոխութիւն կը պատրաստէին Հայաստանում: Զէնքերը անզլիացիները պիտի հասցնէին Ալեքսանդրէափ վրայով: Ընտրուած էր Սուփուիէ անունով փոքրիկ ծովափնեալ նասահանդիսար, Ալեքսանդրէափից գէպի հարաւ, որ կենտրոն պիտի դառնար. այդտեղ արդէն բերուած էր զէնքերի առաջին կարաւանը և նա կամաց հայութիւն կենակէտ ընտրուած էր Կաստաք գիւղը: Կազիուս սարի ստորոտում, ինչպէս ծովի հետ յարմար հաղորդակցութիւն ունեցող մի տեղ նոյնպիսի մի տեղ էլ, փոքր Հայաստանի կենտրոնի հետ հաղորդակցութիւն պահպանելու համար, ընտրուած էր Զօխ-Մարտիրման գիւղը, որ յարմար է Զէլթունի, Ֆուրնուզի, Հաջինի, Սիսի և Մարաշի հետ հաղորդակցութիւն պահպանելու համար Այսպիսով ենթադրում էր միանգամից ոտքի կանգնեցնել Կիլիկիաի ամբողջ հայ ազգաբնակութիւնը:

Թալց հեղինակը ցնորական է համարում այս ծրագիրը, որովհետեւ հայերը ցրուած են ապրում, Մըջապատուած մահմեղական պայտարնակութեամբ. կայ և այն, որ բացի կարիճ զէլթունցիներից, հայերը, մասաւանդ քաղաքներում ապրողները թույլ են և վախկուտ:

Կալին, ասում է հեղինակը, և աւելի զգուշ հայեր, որոնք առա-

ժարկում էին փող հաւաքել և փողով գնել Կիլիկիայի ալն ազատ հողերը, որ ծախում էին թիւրքերի ձեռքով. արդպիսով Ռուբինեան նախկին թագաւորութեան մէջ կը ստեղծուէր մի կենտրոն շերնօգորիայի նման:

Յամենայն զէպս, հայկական հարցը մի խոր վէրք է, որ լափում է թիւրք պետութիւնը և կարող է նորից ծագել սուր ճեռով, թէ թիւրքիւրում արող հարցերը չը կարգադրուեն եւրոպական ոյժերի օջնութեամբ, դիպօմատիան, յամենայն զէպս, պիտի իրագործէ դեպանների ծրագրած այն ըէֆօրմերը, որոնք մշակուած են հայկական հինգ վիլայէթների համար Անապատ, սուլթանը համաձայնութիւն տուեց դեպանների ներկայացրած այդ ծրագրին, բայց դրանից մի շարաթ անցած սկսուեց հայկական կոոռըածների սոոկալի օրգիան Եւրոպայի և նրա դեսպանների աչքի առաջ: 1896 թուի հոփութերին ֆրանսիական դեսպան Կամբօն համատիացրեց, որ ոչ մի ըէֆօրմ չէ էլ սկըսած. նոյն այդ ժամանակ անդիւկան կառավարութիւնը դիմեց ֆրանսիականին, առաջարկելով պահանջել թիւրքաց կառավարութիւնից խոռոշացած ըէֆօրմերի իրագործումը, բայց դժբախոսաբար, Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Հանոստ պաստախաննեց թէ ֆրանսիան թիւրքաց կայսրութեան անձնումիւթիւնեան կոլմն է և հակառակ է որ և պետութեան թէ հաւաքան և թէ առանձնական միշտամութեան: Հանոստի այդ պատասխանից յետոյ դիպօմատիական շրջաններում հայոց հարցը մատնեց մեռելալին լուռթեան^ւ...

Այնուհետև հեղինակը դառողութիւններ է անում թէ ինչպէս կարելի է լուծել հայկական հարցը, այսինքն ինչ միջոցներով կարելի է այնպէս անել, որ հայ ազգը չը տանջուի, գտնէ համեստութիւն, հայերի

ընդհանուր թիւը նա ընդունում է 3,093,779 հոգի: Ակդ թուից՝ Արքական Թիւրքիայում 1,333,779, նորոպական Թիւրքիայում 250,000 Ռուսաց Հայաստանում, Կովկասում և Ռուսաստանում 1,500,000, Պարսից Հայաստանում 150,000, Միւս երկիններում (Հնդկաստանում Ամերիկա և ալլն) 60,000: Ընդհանուր թուից պէտք է հանել 1895—1896 թուականների դազանաթիւնների զաներին՝ 300,000 սպանուած, հրանդութիւններից և աղքատութիւնից մեռած և բռնի մահմեցական դարձրած: Ասիական Թիւրքիայում ապրող հայերի թիւը պէտք է ընդունել 1,930,586 հոգի: Պ. Կօնոսունան երկար խօսում է և մահմեցական ազգաբնակութեան, զանազան ցեղերի մասին:

«Կավկազի Ենոտնիկъ», № 10. հոկտեմբեր: Ամսազրի ալթ համարում կան հայոց կեանքին և գրականութեան վերաբերուած մի քաքանի յօդուածներ, որոնց մէջ չիշատակուում ենք Վիկտոր Լանգլուայի գրութիւնը Վենետիկի Սիսիթարեան վանքի և միաբանութեան մասին, որ թարգմանուած ֆրանսերէնից և այս գրքում զեւ չէ վերջացած: Առանձին յաւելուածի մէջ տպուած է պ. Կ. Նշեանի մի նոր աշխատութիւնը՝ Շիշմիածնի կաթողիկոսական գահի սուսաց կառավարութեան հետ ունեցած յարաբերութիւնների սկիզբանը մօս լինուն տարուած մի պատմութիւն է, XVIII տարի երկրորդ կեսից սկսած մինչև այն ժամանակ, երբ սուսաց տիրապետութիւնը հաստատուեց Անդրկովկասում և վերջանում է Յովաէլի կաթողիկոս Արդութեանի մահով: Նոր բան պ. Նշեանի այս աշխատութեան մէջ շատ քիչ կայ: Բոլոր աղքիւները, որոնցից նա կազմել է այդ համառուու տեսութիւնը, յայտնի են և

մատչելի նոյն իսկ և ոչ մասնագէտին։ Գրուածքը տեսդենցիօղ բնաւորութիւն ունի։ Աշխատելով բարձրացնել էջմիածնի նշանակութիւնը, պ. Նզեան այն աստիճան անտես է անում պատմական հշմարտութիւնը, որ Գանձասարի կաթողիկոսների մասին ասում է. «Օգտուելով էջմիածնի կաթողիկոսութեան ննջուածդրութիւնից, հայ երարխիալի միքանի փառասէր ներկայացուցիչներ ձգուում էին կազմել եկեղեցական անկախ կենդրուներ, տեմպականացնելով կաթողիկոսի տիտղոս։ Այսպիսի հանապարհով առաջ եկան և Գանձասարի կաթողիկոսները Պարսկաստանում, որոնք գոյութիւն պահպանեցին մինչեւ Հարաբաղի խանութիւնը Յուսաստանին միացնելը։ Մինչդեռ Գանձասարի կաթողիկոսները, իսկ Աղուանից կաթողիկոսութիւնը բրիստոնէութեան սկզբից անկախ աթոռ էր—նոյն իսկ էջմիածնի կաթողիկոսներն էլ Գանձասարի աթոռը հանաչում էին Աղուանից կաթողիկոսական աթոռ։

—
Въстникъ Иностранный Литературы, հոկտեմբերъ XVIII դարի սկզբում Պարիզի Բաստիլլ բանտում վախճանուեց մի կալանառը, որի դէմքը ամբողջ ժամանակ ծածկուած էր երկաթէ դիմակի տակ Ո՞վ էր այդ խորհրդաւոր մարդը—Աչ ոք չը գիտէր, նա Բաստիլլ բերուեց 1698 թուին և ալդանել էլ մեռաւ հինգ տարուց լետոր Ոչ ոք չը տեսաւ նրա դէմքը, ոչ ոք չը լսեց նրա խօսքը, Բանտի պատերը այդ գաղանիքը պինդ էին պահում իրանց մէջ։ Բայց դրանցիների հետաքրքրութիւնը շատ գրգռեց այդ երկաթէ դիմակը։ Շատերը փորձեցին իմանալ թէ ով էր անդայտ կալանառը։ Եւ ստեղծուեցին բազմաթիւ պատմութիւններ։ Այդ պատմութիւններից մէկն էլ գրեց ոնք

կավալէր դը-Ցոլէս, Վոլտէրի բարեկամը նա ապացուցանում էր որ երկաթէ դիմակով մարդը հայոց պատրիարք Անետիքն էր Բոլոր հանգամանքները այդ ենթադրութեան կողմն էին։ Եւ Անետիքի անձնաւորութիւնը աւելի Կանաքարք-Քրական դարձաւ Սկանդին քրքիել արխիեպիքը հայոց պատրիարքի պատմութիւնը պարզելու համար Թէկ Տօւչի ենթադրութիւնը սխալ գուրս եկաւ, թէկ պաշտօնական տեղեկութիւնները հաստատեցին որ այն ժամանակ, երբ երկաթէ դիմակով մարդը մեռաւ Բաստիլլում, Անետիքը գեռ պատրիարք էր Կ. Պօլսում, բայց և այնպէս, բռնութեան զոհ դարձած այդ եկեղեցականի պատմութիւնը կապուած մնաց երկաթէ դիմակի պատմութեան հետ Առաջամագիրն էլ մի լոդուածում տալիս է երկաթէ դիմակի պատմութիւնը, հետեւալար պատմում է և Անետիքի կեանքը։

Խնչպէս լալունի է, 1706 թուականին Կ. Պօլսի հայոց Անետիք պատրիարքը, պաշտօնանկ լինելով ուղարկուեց աքսոր ձանապարհին նա մի անլուր բռնութեան զոհ դարձաւ։ Քիոս կզզում, ափ իջնելիս, նա յափշտակուեց ֆրանսիական դեսպան Ֆրիդի մարդկանց ձեռքով, մոցրուեց լատկապէս վարձուած մի նաւի մէջ և ուղարկուեց Մարմէլլ Ալյանելից նրան տեղափոխեցին Ֆրանսիայի հիւսիսացին ափերի մօտ գտնուող մի ամայի, ժայռոտ կղզի, ուր մի վանք կար։ Բայց ֆրանսիական կառավարութիւնը այդքանն էլ բառական չը համարեց Անելի մհծ ապահովութեան համար Անետիքը փոխադրուեց Բաստիլլի բանտը։ Ալյուտեղ նրան առաջարկուեց ազատութիւն, եթէ նա զաւանափոխ կը լինի։ Տերունի, տանջուած, հիւսուած հայ եղիսկոպոսը ստիպուած եղաւ կաթողիկութիւն ընդունել և դուրս գալով բանտից, մեռաւ Պա-

ըիդում 1711 թուականի լուլսի
21-ին:

Ի՞նչն էր Աւետիքի յանցանքը
և ինչո՞ւ արդքան զգուշութիւններ
էին բանեցնում նրա վերաբեր-
մամբ:

Աւետիքի պատմութիւնը յայտնի
է մեր ընթերցողներին՝ "Սուրճի"
այս տարրայ առաջին համարնե-
րից: Նրան վիճակուած էր աւելի և
սուր կերպարանք տալ այն կոփ-
ներին և վէճերին, որոնք սկսուած
էին Կ. Պօլսում, լուսաւորշական և
կաթոլիկ հայերի մէջ: Կ. Պօլսում
բուն դրած եղանակները աշխատում
էին, կաթոլիկական պրոպագանդայի
աջողութեան համար, սատկացնել
խոռութիւնները, թույլ չը տալ կա-
թոլիկ հայերին որ նրանք մօտենան
իրանց ազգակից հայերին: Ֆրանսի-
ական գեսպան Ֆէրիոլ, մի ար-
կածախնդիր և կոռասէր մարդ,
դործիք զարձաւ եղուիտների ձեռ-
քին և աշխատում էր տապալել Ա-
ւետիք պատրիարքին: Սակայն Աւե-
տիքն էլ, իր կողմէ ունենալով իր
ժողովրդի համակրութիւնը և թիւրք
շէլիուլ-իսլամի բարեկամութիւնը,
համարձակ կռում էր իր հակառա-
կորդների գէմ և հալածում էր հայ
կաթոլիկներին, թէ ինչ շափերի
էր հասել այդ կրօնական երկպա-
ռակութիւնը, երկում է հէնց նրա-
նից, որ լոսաւորշական հայերը,
թիւրք իշխանաւորներին կաշառելու
և նրանց միջոցով կաթոլիկներին
դիմագրելու համար, հաւաքեցին ի-
րանց մէջ 200 հազար ռուբլու մի
զումար Վերջին Ֆէրիոլ դի-
մեց վայրենի և զզուելի միջոցի:
Նա, ինչպէս ասացինք, զողանալ
սուեց հայոց պատրիարքին և ու-
ղարկեց Ֆրանսիա Հայերը, ի հար-
կէ, իրալ անցան և դիմեցին թիւրք
կառավարութեան, ինդրելով ար-
դարադասութիւն: Կառավարու-
թիւնը ոչինչ չը կարողացաւ իմա-
նալ դեսպան Ֆէրիոլից: Նա թագ-

ցնում էր, բաւականանում էր ասե-
լով թէ ոչինչ չը գիտէ: Ֆրանսիա-
կան կառավարութիւնը ալդ միջոց-
ներում բարեկամական յարաբերու-
թիւններ էր պահպանում Թիւրքիակի
համար: Նև սրովետև Ֆէրիոլի վալրենի
արարքը կարող էր սահնութիւն
մտցնել այդ յարաբերութիւնների
մէջ, ուստի նա աշխատում էր ցոյց
տալ թէ ինքն էլ ոչինչ չը գիտէ:
Աւետիքի մասին և այդ պատճառով
էլ այնքան մեծ զգուշութիւններով
էր պահպանում անմեղ կալանաւոր
Աւետիքին:

Պէտք է ասել որ ուստի ամսագրի
յօդուածը նորութիւն չէ մեղ հա-
մար: Աւետիքի պատմութիւնը, որ
գրել է Մարիոս Տօրէն, թարգ-
մանուած է և տպաւած Կ. Պօլսում
դեռ 1870 թուականին:

"Միք Եօջին", սեպտեմբեր
նրբն առանձին յաւելուած, տպագըր-
ուում է ֆրանսիացի պլոֆէսոր Եղու-
արդ Դրիօի և ւրոպայի պատմութիւն
XIX դարի վերջում: Հեղինակը
խօսում է ժամանակակից անցքերի
մասին: Եերում ենք այն կտորը, որ
վերաբերում է հայոց հարցին.

«Հայերը, ինչպէս մեղ թում է,
արդէն բասականաչափ քաւել են
իրանց այն մեղքը, որ քրիստոնեալ
են մասցել մահմետական զիշափէ-
ների մէջ: Քրդերը, նրանց հարե-
անները, կանոնաւոր կերպով խորու-
են նրանց հունձը, այրում են նրանց
տները, կտոր-կտօր են անում նը-
րանց երեխաներին, բռնաբարում
են նրանց կանանց և սպանում են,
եթէ այս բանը նրանց դուր է զա-
լիս: Հայաստանը, ալպիսով, սուլ-
թանը տուել է իր հաւատարիմ
քրդերին՝ զուարձութեան համար:
Քրիստոնեալ մեծ պետութիւնները
հարկադրուած էին շատ անգամ հայ-
երի պահպան հանդիսանալ և
յաճախ պահանջում էին սուլթանից
պաշտօնական խօստում, թէ նա

վերջ կը դնէ իրերի այսպիսի դրութեան Սուլթանը խոստանում էր կառարել այն ամենը, ինչ նրանից պահանջում էր և, ի հարկէ, ոչինչ չէր անում:

«Խօսդ զնելով ներոպայի պաշտպանութեան վրայ և ուժասպառ զառնալով նոր զարթնած մահմեղական փանաթիքառութեան տանձանքներից, հաւերը փորձեցին պահպանում և մի քանի լու գտնել առին քրոգերին: Այն ժամանակ սուլթանը քրոգերի օգնութեան ուղարկեց կանոնաւոր զօրքեր, որպէս զի կարդ պահպանուի և Հայաստանը ամբողջովին ողողուեց արինով և կրակով: Այս նորկալի խմբական կոտորածները շարունակուցին: 1894-ից մինչև 1896 թռականը Ընդամենը մօտ 150,000 զոհեր եղան, կամ, ուրիշ աղբիւրներին նայելով, նոյն իսկ 300,000, չը հաշուելով նրանց, որոնք մեռան սովոր արդ քարուքանդ արած երկում: Այս բոլոր սարասիները ամենաամօթալի սկանդալ էին XIX դարի վերջում: Քայլ ներոպան ի՞նչ վճռեց ձեռքառնել արդ ժամանակի բոլորին ոչինչ նառավարսիթիւնները յամառութեամբ լուսմ էին ասելի քան երկու տարի, աւելի հանդիսանոր կերպով յացտարարելով, քան երբ և իցի, օսմաննեան պետութեան անբաժանելութեան սկզբունքը ուշտ է, կատարուեց քննութիւն, կաղմակերպուեցին միջազգային յանձնաժողովները և ներոպական պետութիւնների վերաբանները բաւարար կերպով յացտարարութիւններին, կաղմակերպուեցին միջազգային յանձնաժողովները արին Յ. Դաւան և նոյն իսկ բաւարար պարզ կերպով որոշուած է ամբողջ պատասխանաւութիւնը (որի համար պատմա-

բանները, ի հարկէ, չափազանց շնորհապարտ կը լինեն եւրոպական մինիստրներին), բայց յանցառուները և մասնաւորապէս ինքը, սուլթանը, չը պատժուեցին:

«Այս դէպքում եւրոպական կառավարութիւնները հետեւում էին և մի ուրիշ սկզբունքի, այն է—չը խառնուել օսմաննեան պետութեան նահանգների ներքին կառավարութեան մէջ:

«Սպանութիւնները, այսպիսով, դասուեցն ներքին կառավարութեան հարցերի մէջ, ուստի և նրանց առաջնորդ առնելով եւրոպական պետութիւնների մրցակցութիւնից դուրս էր նրանք նոյն իսկ չը պահանջեցին որ պահպանուեն այն իսկ դաշնագրութիւնները, որոնց տակ ուած են նրանց ներկայացուցիչների ստորագրութիւնները Ալապէս Բերլինի դաշնագրութեան 61 յօդաածով պետութիւնները իրանք պարաւարուել են հետեւ բարենորդութիւնների իրագործման: Բայց մինչև այժմ, գոնէ այն բոպէին, երբ ես զում եմ, հայկական հարցը դեռ էլի բաց է մնում: Կոսովուածները, ճիշտ է, զատարեցրած են— գոնէ դրանց մասին այլ ևս չեն խօսում, բայց հայերը այնպէս էլ չը կարողացն լուրջ ապահովութիւններ և որ և է բէֆօրմ ձեռք բերել: Բերլինի դաշնագրութեան 61 յօդուածը մնում է մեռած տառ և նրանց ստորագրած պետութիւնների վրայ ծանրացած է այն լանցանքը, որ նրանք թուլ տուին կատարել: Յայտնի է նոյն իսկ, որ նրանք թուլ տուին կատարել: Յայտնի է նոյն իսկ, որ նրանք ոչ մի դէպքում չէին համաձանուի նորից վերանորոգել արդպիսի մի յօդուած:

Անաշառ պատմութիւնն է մնում նահանուակների միակ պաշտպանը: